№ 161 ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 26

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 26 № 161

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ԹԱՏՐՕՆ „ՄՈՒԼԷՆ-ԷԼԵԹՐԻԿ“ Իւնիերակի դպրոցի հանդէպ } ՍԷԱՆՍՆԵՐԸ ԲԱՑՕԴԵԱՅ ԵՆ } ԳՆԵՐԸ ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ } ՆՈՒԱԳՈՒՄ Է ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲԸ
705. 1—1

ԿՈՉ

Թիւրքաց Հայաստանի հայ ազէտեալներին օգնող ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ, վերսկսելով իր գործունէութիւնը, Կայսերական Բարձր կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն, սրանով կոչ է անում Կայսրութեան բոլոր հայ ազգաբնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել Թիւրքաց Հայաստանի տառապեալ և աղէտեալ հայ ժողովրդին, մանաւանդ Ադանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին։

Անօրինակ է պատմութեան մէջ և սոսկալի այն աղէտը, որին ենթարկվեց Ադանայի և շրջակայքի հայ ժողովուրդը։ Եւս առաւել ուրեմն բարոյական ահագին պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի և այլ տեղերի հայ ժողովրդի վրա փութալ ամոքել դառն վշտերը, սրբել աղի արտասուքները և փրկել անտէր, անօգնական մնացած որբերին։

Նուէրները պէտք է ուղարկել Հանգանակիչ Մասնաժողովի անդամ-դանձապահ Առաքել Սարուխանեանին այս հասցէով. Тифлисъ, Контора А. И. Манташева и К°, Аракелу Саруханяну. Tiflis, Société Mantacheff et C.-ie, A. Saroukhan. (հ. կ.) 595. 10—4

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

հրաւիրում է այն անձերին, որոնք ցանկանում են մասնակցել Ժողովրդական Տան համար պարտաստող երգեցիկ խմբին և երաժշտախմբին, դիմել Ժողովրդական Տան երաժշտական մասի կառավարիչ Յովսէփ Գէօրգիեվիչ Տէր-Դաւթեանին (Ելիզավետինսկայա, 40)։ Ընդունելութիւնները ամեն օր՝ երեկոյեան ժամը 6-ից մինչև 7-ը։

(ու. կ. ե.) (առ.) 687. 3—2

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՈՒՐՍԵՐ ԽԱՐԿՈՎՈՒՄ

(Վօզնեսենսկայա փող. № 3)

ՊԱՏՄԱ-ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ֆակուլտէտների I, II և III կուրսերը (եռամեայ դասընթացքով, ինչպէս Մոսկվայի Կայսեր. Լիցէյում) մանելու համար խնդիրներն ընդունվում են այդ ֆակուլտէտների դրասենեակում (Մաշ-Ցոնչարովսկայա, II)։

ԲԺՇԿԱԿԱՆ ֆակուլտէտի (III կուրսի կլինիկաները արդէն պատրաստ են) I, II և III կուրսերը մտանելու համար խնդիրներն ընդունվում են Բժշկական ֆակուլտէտի դրասենեակում (Վօզնեսենսկայա, 3)։ Խնդիրները տրվում են Կուրսերի Կառավարչի անունով և ուղարկվում են ընտրած ֆակուլտէտի դրասենեակը։

I կուրսը մանելու համար խնդիրքի հետ միասին ներկայացվում են հետևեալ գրկումենտները բնագիրները. դիպլոմային 7-րդ դաս. աւարտման վկայական, ծննդեան մետրիկ. վկայական (ամուսնացածների համար՝ ամուսնութեան վկայական ապ.) բաց-[illegible] վայ ուսման վճարը (բժշ. ֆակուլտ. վճարը տարեկան 200 ր., իրաւաբանակ. և պատմա-լեզուաբան[illegible] պատասխանի համար, այլապէս խնդիրները անուշադիր են թողնվում։ Բարձր կուրսերը մանելու համար՝ բացի վերոյիշեալ գրկումենտներից՝ պիտի ներկայացնել նաև վկայական, որ խնդրատուն հաշվում է եղել համապատասխան հիմնարկ. սեմեսարներում։

Կուրսերում թէ տեսականօրէն և թէ գործնականօրէն աւանդվում են (բոլոր ֆակուլտէտների ունկնդրուհիներին) լատիներէն, նոյնպէս և նոր լեզուներ՝ ֆրանսերէն, անգլերէն և գերմաներէն։

Հրէական դաւանութեան պատկանող անձերին Կուրսերը բնակութեան իրաւունք չեն տալիս։

(24, 26, 28 օգ. 15, 25) (առ.) (M. 231186) 685. 5—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, կիրակի, յուլիսի 26-ին, Ժողովարանի ամարային նոր շինութեան մէջ տեղի կունենայ

Ընտանեկան Երեկոյթ

Տիկ. Իվանիցկայայի սինեմատօգրաֆը՝ ամենալաւ նոմէրներից, բաղկացած 4 բաժանմունքից։

Երեկոյթին կը նուագէ երաժշտախումբը։ Հիւրերը թոյլատրվում են ընդհանուր հիմունքներով, պ. պ. անդամների առաջարկութեամբ։

(առ.) 703. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Ենֆիճաեանցի։

ՏԷԼԷՖՈՆ 695

Ե. Գ. ՖԷԴՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։

Վ. Դ. ԳԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և ենթաներքին։

Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։

Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։

Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ։

Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խորուրդական և կանանց հ. 1—2 ժամը։

Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։

Բ. Ս. ՄՈՒՍԷԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։

Ն. Գ. ԶԻԶԻՆԱՁԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։

Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպական, բակտերիոլոգական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։

(օ. մ.) ա. 38. 100—67

Ժողովրդական Տուն
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդական ներկայացումների կազմակերպ.

Հայկական սեկցիա

Կիրակի, յուլիսի 26-ին,
Հայոց դրամ. ընկ. թատերասէրների խումբը Մանսկցութ. տ. Դուլազեանի և պ. Մամիկոնեանի
կը ներկայացնէ Բօմարշէի յայտնի

„ՍԵՎԻԼԻԱՅԻ ՍԱՓՐԻՉԸ“

Կօմ. 4 գործ. թարգմ. Կ. Մարտիրոսեանի.
Սկիզբն է երեկոյեան 8½ ժ.։
Տեղերի գները 50 կ. մինչև 5 կ.։

(շ. կ.) (առ.) 689. 2—2

Առաջիկայ օգոստոսի 1-ից
Վլադիկավկազում

Արսէն Վ. Դէյկարխանեանցը

ԲԱՑՈՒՄ Է

ԳՐՔԵՐԻ ԵՒ ԹՂԹԵՐԻ վաճառանոց:

(առ.) (օ. մ.) 659. 25—5

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

II

Սպանիայում կատարվող դէպքերը անսպասելի էին ընթերցող հասարակութեան համար։ Հեռագիրները զարմանք էին պատճառում իրանց հաղորդագրութիւններով, որովհետև ոչ ոք չէր սպասում պատերազմի սպանացիների և մարօկկօցիների միջև և միևնոյն ժամանակ չէր ենթադրում տպստամբական և յեղափոխական տրամադրութիւններ սպանական ներքին աշխարհում։

Սակայն այն բոլոր անձերը, որոնք ծանօթ են սպանական գործերին և սպանացիների վերջին տասնեակ տարիների տրամադրութիւններին, ամենևին չը պէտք է զարմանան ականատես լինելով այնպիսի եղելութիւնների, որպիսիները նելկայումս մեր առաջ են։

Սպանիայի ներքին քաղաքական կեանքը վաղուց յուզմունքների մէջ է և մինչև այժմ չէ գտել այն կաղապարը, որ կարող էր լիակատար բաւարարութիւն տալ նրա ձգտումների արտայայտութիւններին։ Սպանական ժողովուրդը, կալուածատէրը, կղերը, իշխանութիւնը չեն կարողացել այնպէս հաշտեցնել իրանց շահերը և այնպէս ուրուագծել իրաւասութեան սահմանները, որ չէզոքացած լինէին ընդհարման կէտերը։ Մի կողմից դասերի և խաւերի փոխադարձ անվստահութիւնը, միւս կողմից նրանց գերիշխելու ձգտումը պահում են միմեանց լարված դրութեան մէջ, մինչև մի առիթ կը ներկայանայ, որպէսզի յանկարծ արտայայտվեն սուր ընդհարումներով և աղէտներով։

Ներկայումս ներքին յուզմունքների առիթ հանդիսացաւ սպանական կառավարութեան նախաձեռնած կռիւը մարօկկօցիների դէմ։ Սպանական ժողովուրդը չէ հաւատում իր կառավարական շրջանների հեղինակութեանը, և անցեալի փորձերը, մանաւանդ Կուբա և Ֆիլիպպեան կղզիների կորուստը թողել է այն տպաւորութիւնը, որ սպանական կառավարութիւնը չը գիտէ իրան սիրել տալ ոչ մի տեղ՝ ոչ իր գաղութներում և ոչ իր սեփական երկրի մէջ։

Եւ պատերազմի դաշտի առաջին անյաղթութիւնը ոգի կանգնեցրեց դժգոհ տարրերի ամենադիւրաբորբոք շարքերը։

Ներքին ապստամբութիւնը ճնշված [illegible] զարմանալու բան չի և ստանան նոր ճիգուաւորութիւններ։

Ա. Քալանթար

ԿԱՅՍՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգ, 24 յուլիսի

Պալատի մինիստրի հեռագիրը յուլիսի 22-ից. «Նոցին Մեծութիւնները Թագաժառանգ Ցէսարեվիչի և Մեծ Իշխանուհիների հետ ներկայ էին «Շտանդարտի» վրա Կայսրուհի Մարիա Ֆէոդորօվնայի անուանակոչութեան առիթով կայացած մաղթանքին։ Բարձրագոյն նախաճաշին հրաւիրված էին Կօնտուտեան պրինցը, շքախումբը, անգլիական նաւերի այն հրամանատարները, որոնք ուղեկցում էին «Շտանդարտին» Անգլիա, ռուսական նաւատորմի նաւերի հրամանատարները, շօտլանդական Սկոտս Գրէյս գրագունների գնդի պատգամաւորութիւնը, որի նուագախումբը ածում էր նախաճաշի ժամանակ։ Ցերեկվայ 4 ժամին Նոցին Մեծութիւնները թագաւորի, թագուհու, մեծ-բրիտանական արքայական տան անձանց և կայսերական պալատի մինիստրի հետ միասին գնացին Ուայտ կղզին, այցելեցին մայր-տաճարը, ուր բարեհաճեցին տեսնել ծովային կադէտների դպրոցը և մայր-տաճարի պալատը, նոյնպէս նրա շինութիւնները, որոնք այժմ փոխարկված են ինվալիդային տան՝ զօրքի և նաւատորմի վնասված օֆիցէրների համար։ Ապա Նոցին Մեծութիւններն այցելեցին Ուէլսի պրինցուհուն և Բատենբերգեան պրինցուհուն, որից յետոյ վերադարձան «Շտանդարտ» նաւը։ Երեկոյեան 8 ժամին կայսրը «Վիկտորիա և Ալբերտ» զբօսանաւով գնաց Էդուարդ թագաւորի սօտ ճաշի, որին հրաւիրված էին «Բօյալ-Էօտսկվադրոն» կլուբի անդամները։ Միևնոյն ժամանակ Նոցին Մեծութիւն Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնայի ճաշին «Շտանդարտի» վրա հրաւիրված էին Ալէքսանդրա թագուհին, Ուէլսի պրինցուհին և նրանց տրամադրութեան ներքոյ գտնվող տիկինները»։ (Հ. Գ.)

—

Կօուս, 24 յուլիսի

Կոմս Բէնկէնդորֆի հաղորդեց Ռէյտերի յատուկ թղթակցին, որ Կայսրի վրա խորին տպաւորութիւն գործեցին Անգլիա այցելութիւնը և այն սրտագին ընդունելութիւնը, որ ցոյց տրվեց Կայսրուհուն և Նրան անգլիական արքայական տան կողմից։ Փառաւոր նաւատեսը ծովային ոյժերի, որոնք ողջունում էին Նորին Մեծութեանը կօուսում թնդանօթաձգութեամբ, անգլիական պետական գործիչների, ժողովրդի և մամուլի վերաբերմունքը,— դրանք բոլորը ապագայի բաղդաւոր նախակարապետներ են։ Կայսրը հաստատ հաւատացած է և յոյս ունի, որ Նորին Մեծութեան կարճատև մնալը Անգլիայում ամենաերջանիկ հետևանքներ բերեց, աջակցելով բարեկամական զգացմունքների ամրապնդման Անգլիայի և Ռուսաստանի միջև։

Լօնդոնի լորդ-մերը, «Շտանդարտի» վրա խօսակցութիւն ունենալով Ռէյտերի ներկայացուցչի հետ, յայտնեց, որ նա խորին կերպով յուզված է այն սրտակցութիւնից, որ ցոյց տուին Կայսրը և Կայսրուհին Լօնդոնի Սիտիի կօրպօրացիայի ընդունելութեան առիթով։ Նրա վրա մեծ տպաւորութիւն գործեցին Կայսրի սրտառուչ խօսքերը անգլիական յարաբերութիւնների մասին։ Լորդ-մերը համոզված է, որ Կայսրի գալուստը Անգլիա ամենաերջանիկ հետևանքներ կունենայ և կաշկէտ քաղաքական և առևտրական յարաբերութիւնների ամրապնդմանը Ռուսաստանի և Անգլիայի միջև։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 24 յուլիսի

[illegible] է, որ [illegible] նշանակութիւնը այն բանի մէջն է, որ քաղաքական status-quo-ի մէջ ոչինչ փոփոխութիւններ տեղի չեն ունենայ։ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը միայն ամրացրին սերտ բարեկամութեան նշանակութիւնը։ Լրագիրը յոյս է յայտնում, որ մի քանի տարուց յետոյ Կայսրը կրկին կը գայ Անգլիա և այն ժամանակ հնարաւոր կը գտնէ այցելել Լօնդոն։ (Հ. Գ.)

—

Կօուս, 24 յուլիսի

Հրաժեշտի նախաճաշին, որ կայացաւ «Շտանդարտի» վրա, ներկայ էին թագաւորը, թագուհին, Կօննաուտեան դուքսը և այլ արքայական ընտանիքի ուրիշ անդամները, ռուսական դեսպան կոմս Բէնկէնդորֆ, Լօնդոնի լորդ-մերը և ուրիշ անձինք։ Միապետների հրաժեշտը ամենասրտագին բնաւորութիւն ունէր։ Միապետները համբուրվեցին։ Կայսրը և Կայսրուհին ճանապարհ դցեցին իրանց բարձր հիւրերին մինչև կամրջակը, ապա թագաւորը և թագուհին իրանց ուղեկցող անձերի հետ վերադարձան արքայական զբօսանաւը։ Կայսերական «Շտանդարտ» զբօսանաւը անյապաղ շարժվեց դէպի ծովը։ Ռուսական դեսպան կոմս Բէնկէնդորֆ հրաւիրվեց յուլիսի 23-ի ճաշին անգլիական արքայական զբօսանաւի վրա։ (Հ. Գ.)

—

Բերլին, 24 յուլիսի

«Նորդ-Դէյտշէ Ալգեմայնէ-Ցայտունգ» գրում է. «Կայսրը, Օգոստափառ Ամուսնու ուղեկցութեամբ, Անգլիայից Վիլհելմ կայսրի ջրանցքով վերադառնալու ժամանակ, կը հանդիպի այնտեղ վաղը կայսրին, որը գալիս է այժմ Բալտիական ծովափից դէպի հիւսիս կատարած ճանապարհորդութիւնից։ Երկու մեծ հարևան կայսրութիւնից։ Երկու միապետներին միացնող բարեկամական յարաբերութիւնները արժանաւոր արտայայտութիւն են գտնում այդ նոր հանդիպման մէջ։ (Հ. Գ.)

—

Կիլ, 24 յուլիսի

Այսօր երեկոյեան այստեղ ժամանեց Սվինէմիւնդէից «Հոհենցոլերն» զբօսանաւով Վիլհելմ կայսրը Թագաւոր կայսրի հետ տեսակցելու համար։ Կիլում հաւաքված են Հիւսիսային և Բալտեան ծովերի նաւատորմիները։ (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Սալոնիկ, 24 յուլիսի

Շարունակվում են կառավարչական ըէպրէսիաները յոյների դէմ։ Կալանաւորված են շատ յոյներ, յարքունիս են գրաւված շատ զէնքեր։ Զօրքերը էկզէկուցիաներ են կատարում յունական գիւղերում։ Հիւպատոսները և քաղաքացիական գործակալները ամեն օր գանգատներ են ստանում ջնջվածներից։ Իշխանութիւնները ուշադրութիւն չեն դարձնում առաջադրութիւնների վրա։ Ռէպրէսիաները յոյների դէմ՝ կապ ունեն կրետական հարցի սրման հետ։ (Հ. Գ.)

—

Կ.-Պոլիս, 24 յուլիսի

Մամուլի, մանաւանդ «Թանինի» սաստիկ յարձակումների պատճառով, որը արտայայտում է երիտասարդ-թիւրքերի կոմիտէի մեծամասնութեան կարծիքը, Ֆէրիդ փաշան հրաժարական տուեց։ Փոխվելու են նոյնպէս առևտրի, ծովային մինիստրները և պետական խորհրդի նախագահը։ Հընարաւոր է ամբողջ կաբինէտի հրաժարականը, սակայն ըստ երևոյթին Հիլմի փաշան յանձն կառնի կազմակերպել նոր, զուտ-պարլամենտական կաբինէտ։

Մօնաստիրի վիլայէթում և Մօնասդցիների գիւղերի ապստամբութեան պատճառով։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 24 յուլիսի

«Կօրրէսպոնդէնց-Բիւրօյին» հաղորդում են Կ. Պոլսից, որ ներքին գործերի մինիստրը և պետական խորհրդի նախագահը հրաժարական տուին, երևի կարծիքների տարբերութեան պատճառով կրետական հարցում։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Լօնդոն, 24 յուլիսի

Յուլիսի 23-ի երեկոյեան ժամանեց մինիստր Իզվոլսկի։

Յուլիսի 23-ի համայնքների ժողովի նիստում Հնդկաստանի գործերի պարլամենտական քարտուղար Էլիբանկ ներկայացրեց Հնդկաստանի բիւջէտը, բացատրելով որ երկրի տնտեսական դրութեան մէջ, համեմատած անցեալ բիւջէտային տարվայ հետ, բարւոքում է նկատվում. ինչ վերաբերում է քաղաքական դրութեանը, կառավարութիւնը չի ցոյց տայ ոչ մի թուլութիւն, ոչ մի տատանում, երբ գործ կունենայ անիշխանականների բռնութիւնների և յանցաւոր գործողութիւնների հետ. բրիտանական կառավարութիւնը հաստատ վճռել է պահպանել կարգը։ Ապա Էլիբանկ մատնացոյց արեց Հնդկաստանի վարչութեան ըէֆօրմների անհրաժեշտութեան վրա, որ առաջարկել է պետական-քարտուղար Մորլէյ, բայց հերքեց այն ենթադրութիւնը, որ իբր թէ կառավարութիւնը ստիպված է ըէֆօրմները մացնել երկիւղի զգացմունքից. կառավարութիւնը առաջ կընթանայ իր շաւղով, չը նայելով անցեալի դժուարութիւններին։ (Հ. Գ.)

—

Ստոկհոլմ, 24 յուլիսի

Քաղաքային լուսավառութեան ձեռնարկութիւնների բանւորները դադարեցրին աշխատանքը։ Բանւորական շրջանների տուած փաստերի համեմատ, գործադուլ անողների թիւը ամբողջ երկրի մէջ հասնում է 300,000-ի, որոնց թիւում 50,000-ը մայրաքաղաքից։ (Հ. Գ.)

—

Վիսբերա (Շվէդիա), 24 յուլիսի

Գործադուլ արած յիսուն բանուորները գնացին գիւղերը և սկսեցին գործից հանել գիւղական բանուորներին մի քանի կալուածքներում։ Ոստիկանութիւնը կալանաւորեց 30 մարդու։ Ապա ոստիկանութեան ընդհարման ժամանակ ամբոխի հետ 23 բանուորներ փախան։ (Հ. Գ.)

—

Գէտտէնբորգ, 24 յուլիսի

Այսօր գործադուլին միացան քաղաքային տրամվայի ծառայողները։ (Հ.Գ.)

—

Բրէսա, 24 յուլիսի

Յուլիսի 23-ին, կէսօրից յետոյ մօտ 3 ժամին, զգացվում էր սաստիկ ստորերկրեայ ցնցումն երեք վայրկեան շարունակ։ Աղդաբնակութիւնը սարսափահար դուրս փախաւ տներից։ (Հ. Գ.)

—

Վաշինգտոն, 24 յուլիսի

Սենատն ընդունեց սակագնային բիլլը։ Հանրապետութեան նախագահ Տաֆտ ստորագրեց բիլլը։ (Հ. Գ.)

—

Բերլին, 24 յուլիսի

Վոլֆին հեռագրում են Թէհրանից. «Վերացված է քաղաքական գործերի համար կազմված յատուկ դատարանը, որը մահվան պատժի դատապարտեց ըէակցիոնէրների 4 պարագուխներին. այսուհետև բոլոր քաղաքական գործերը կը քննվեն ընդհանուր դատարաններում»։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 24 յուլիսի

Կրասնօսէլսկի փողոցի վրա փլվեց կառուցվող հինգ-յարկանի տունը։ Փուլ գալը տեղի ունեցաւ աշխատանքներն սկսելուց առաջ։ Մարդկային զոհեր չը կան։ (Հ. Գ.)

—

Սեվաստօպոլ, 24 յուլիսի

Յուլիսի 23-ին երկրորդ օրն է, որ սաստիկ քամի է փչում։ Քաղաքը ծածկված է փոշու մառախուղով։ Շոգը տրօպիքական է։ (Հ. Գ.)

—

Եկատէրինբուրգ, 24 յուլիսի

Տօբոլսկի գաւառում սաստիկ փոթորիկ սկսվեց ձուի մեծութեան կարկուտի հետ միասին։ Ցանքսերը շատ գիւղերում կատարելապէս ոչնչացված են։ (Հ. Գ.)

—

Կուստանայ, 24 յուլիսի

Անապատային հրդեհից, որ տեղի ունեցաւ գաւառում կրակի հետ անզգոյշ վարվելուց, սաստիկ այրուածքներ ստացան 21 մարդ, որոնցից 5 ~= բուրտաներ։ (Հ. Գ.)

—

Մինսկ, 24 յուլիսի

Յարձակումն գործվեց պօստի վրա կողոպտելու նպատակով, որը Պետրիկովից գնում էր կայարանը։ Պօստարը և կառապանը սպանված են, յափշտակված է 100 ր. պակաս մի գումար։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 17 յուլիս

Ադանայի հարցը, կրետական հարցի հետ, պարլամենտի օրակարգին մէջ անցած է։ Դահլիճը, ինչպէս կերևի, ահաւոր ճշմարտութեան առջև սարսափահար, այդ միջոցը գտաւ իր օձիքը ազատելու համար թիւրքական ընդհանուր տրտունջներէ ու սպառնալիքներէ, որոնք գաղտնի կամ յայտնի տեսչային դահլիճին եթէ խոտորնակ գիծերով հարցէն դուրս չկարենար ելնել ի նպաստ յայտնի ոճրագործներու։

Տեսնենք ինչ պիտի վճռէ Ահմէդ Ռիզայի պարլամենտը։ Հայ քննիչը, պարլամենտի անդամ միևնոյն ատեն, Պապիկեան, իր դէմը իբրև հակառակորդ ունեցաւ, առջի օրուընէ իսկ, թիւրք քննիչը, նոյնպէս անդամ պարլամենտի։ Պապիկեան կը խօսի միմիայն կատարուած խժդժութեանց և յայտնի ոճրագործներու մասին. իր թիւրք պաշտօնակիցը կը ջանայ խօսիլ ամեն թիւրքի պէս որ, առանց տեսած ըլլալու կատարուած իրողութիւնները, պիտի խօսէր միմիայն իր կրօնակիցներու պաշտպանութեանը համար։ Հետաքրքրական պիտի ըլլայ թիւրք թերթերուն բռնելիք ուղղութիւնը, որ, վերջերս, բոլորովին համակրական էր մեզի և ցաւակից կիլիկեան աղէտքներու մասին։

Ահմէդ Ռիզան լաւ դերակատար է։ Երբ տեսնէ թէ ունիցէ հարց պարլամենտի մէջ կը միտի վիճաբանութեանց շարքով իր չփափագած եզրակացութեանը, իր զանգակին աղմուկովը դուրս կը թափէ իր վրդովմունքը, ժխորի մը տեղի կուտայ և հարցին քուէարկութիւնը կը յետաձգէ վաղուան։ Այդ «վաղը» միջոց մըն է հարցին ճակատագիրը հիմովին փոխելու։ Դոնէ ցարդ այդպէս վարուեցաւ։ Մամուլի սեղմումի, քաղաքական կուսակցութեանց ջնջումի օրէնքները այդպիսի մեքենայութիւններով յաջողցուց այն մարդը, որ այսօր իրաւունք ունի ըսելու, թէ ապրած է իբրև յեղափոխական, ազատ թերթի խմբագիր եղած ու ազատ խօսքի պէտքը քարոզած է։

Ակէ առաջ, պարլամենտի վրայ այնքան յուսադիր եղած էինք, որ ծերակոյտի գոյութեանը դէմ սոսկ ատելութիւն ունեցանք։ Իսկ այսօր, կատարուած փորձերուն հետևելով, Սայիդ փաշայի ծերակոյտը աւելի սահմանադրականութիւն ցոյց կուտայ, քան թէ Ահմէդ Ռիզայի պարլամենտը։ Սայիդ փաշա, յուլիսի ազդ. ատենի առթիւ, խօսեցաւ երկրին տարբերուն համերաշխութեանը մասին, երկրին փրկութիւնը գտնելով միմիայն այդ պայմանին մէջ, մինչդեռ պարլամենտի նախագահը կրկնեց իր հին երգը,—հաշտութիւն փոխադարձ զիջումներով։ Դիտէք ինչ ըսել կուզէ. այսինքն թէ եղածը եղած է, թող հայերը չպահանջեն արդարութեան ատեանատուութիւն։ Թիւրք ոճրագործները լոկ պարզներուն չդարձուին կատարուած թալանները, հողերը գրաւուած մեռնող յափշտակողներուն ձեռքը, ու այդպէս հաշտուին նոր եղբայրակցութիւնով։ Ապրիս, պարոն նախագահ։

Իրեն կառարկենք, որ եթէ իր կրօնակից եղբայրները, վաղը կամ միւս օր, միևնոյն փորձը կատարեն երկրին մէջ ուրիշ ոճիրի մը վրայ, ինչ պիտի ընենք այն ատեն։

— Ոչ,—կըսէ,—ապահով եղէք թէ սահմանադրական կառավարութիւնը երբէք թոյլատու չպիտի ըլլայ։

— Ինչով կամ ինչպէս վստահ ըլլանք, քանի որ սահմանադրական բռնաբարութիւնով կը բռնաբարէք այսօր ամեն իրաւունք ու փոխադարձ հաշտութիւն բացատրութիւնով յայտնապէս կուզէք պաշտպան հանդիսանալ մարդասպաններուն, սրիկաներուն։

— Անցածը անցաւ,—կըսէ։

— Գալիքն ալ կուգայ, նախագահ։

Գլուխը կը քերէ ծեր նախագահը ու աչքերը կը դարձնէ անդին, ցոյց տալով թէ շատ ախորժ չզգար իրաւասիրութենէ, արդարադատութենէ։

Դահլիճի փոփոխութեան զրոյցները հեռուստէ կարձագանգուին աւելի որոշ ու յայտնի պատճառաբանութիւններով։ Երիտասարդ-թիւրքերը, գոնէ մեծ մասամբ, ալ յուսահատ են հին վարչութենէ մնացած պաշտօնատարներու օգտակարութենէն։ Իրենց հաշիւովը՝ պէտք է երկրին վարչութեանը մէջ մտնեն նորեր, ինչպէս եղաւ եղիպտական մինիստրի մասնաբը։ Բայց մթթ ամեն երիտասարդ-թիւրք Զաւիդ բէյ է։ Ուրիշ մաս մը, քիչ մը աւելի պահպանողական, կուզէ դահլիճը խաղաղ թողուլ իր արդի վիճակին մէջ, գոնէ Հիլմի փաշան պահել իբրև մինիստր-նախագահ։

Պաշարման վիճակը, հակառակ ինչ-ինչ զրոյցներու, պիտի շարունակէ մնալ թերևս մինչև երկու տարի։ Զինուորական կամայականութիւնը թէև մասամբ ոչ-ցանկալի, բայց նկատելով վայրենի խուժանին հոգեկան գրութիւնը՝ միշտ տրամադիր դէպի յետադիմական հակումներ, դէպի թալանը, դէպի սպանութիւնը, համեմատաբար աւելի լաւ է «պաշարման վիճակը»։ Մեծ վարժութիւն մը թերևս ունակութեան փոխուի, և համակերպութիւնով մը աւելի սահմանադրական ըլլայ քան թէ համոզումով որ, կարծեմ, երբէք չպիտի մուտ գտնէ ասիական բարբարոսներու մէջ։

Անշուշտ չէք զարմանար, երբ ըսեմ թէ մեր քիւրդերը, որ իրենց շահերու համեմատ ճկուն են, անհամբեր կը սպասեն սահմանադրական ազատ օրերու։

Գաւառներէ առնուած լուրերը, տեղ-տեղ, շփոթութիւններ կը բերին. կան տեղեր ալ, որոնց մասին խաղաղական են։ Ինչ որ ճըշմարիտ է, սա է որ միօրինակ ուղղութիւն չենք տեսներ. օր կայ որ չարագործները կը հալածուին, կը ձերբակալուին, օր ալ կուգայ որ, հակառակ բոլոր ակնկալութեանց, բանտին դուռները կը բացուին և ոճրագործները դուրս կը հանուին իբրև պնմեղներ։ Այս վերջին պարագան շատ վնասակար է։ Զարգարդ մը, երբ իր յայտնի ոճիրներու համար ձերբակալուիլ եռքը անպատիժ կը թողուի, լռելեայն սա եզրահանգումը [illegible] կարդարադատութիւնը լոկ պարտուակ մըն է՝ երևոյթներ փրկելու համար։ Ու այդպէս եռքինը աւելի դէշ կըլլայ քան թէ առաջինը։

Արտագաղթի շարժումը ծայր տուած է երկրին մէջ ամեն տեղ։ Թերևս հնարաւոր ըլլար առաջը առնել, եթէ Ադանայի զինուորական ատեանին անօրինակ ուղղութիւնը վերջին յուսահատութիւնը չբերէր թիւրք արդարադատութեանը մասին։ Ի՞նչպէս կարելի է համարձակիլ ըսելու թէ «կեցէք, անցած է ամեն վտանգ, և թէ գաղթականներ մի՛ գաք»։ Ինչպէս կարելի է ասել թէ «ոչ մի՛ մեղաւոր չպիտի ազատուի»։ Ինչպէս կարելի է ասել թէ «ոչ մի՛ անմեղ չպիտի տանջուի»։ Ինչպէս կարելի է ասել թէ «ոչ մի՛ հայ թերթերը թարգմանաբար տպել են»։

Խմբագիր.—Պաշտօնական աւարտեցաւ Ադանայի մէջ, եթէ ոչ ձեր վերադարձին պատճառ եղած է ձեր ընկերոջ հետ ունեցած կարծիքի անհամաձայնութիւնը։

Պապիկեան.—Անհամաձայնութեան զրոյցը ճշմարտութեան մասին չէ։ Ըստ իս՝ քննիչ մարմնոյն աշխատութիւնները աւարտած են, և այդ պատճառաւ պաշտօնս ալ աւարտած է։ Եուսուֆ Քէմալ բէյ ալ ժամերս պիտի դառնայ։

Խմբ.—Երբ Ադանա հասաք, ինչ վիճակի մէջ տեսաք զայն։

Պապ.—Նախ սա կէսը ձեզի հասկցնել կուգամ, թէ իմ յայտարարութիւններս պէտք է ընդունիք իբր խօսքերը անկեղծ ու ճըշմարտասէր օսմանցիի մը, որ երդուած է հայրենիքին երջանկութեանը ու բարգաւաճմանը գործածել իր կարողութիւնը։ Մէկ խօսքով՝ կրնամ ըսել թէ Ադանայի դէպքին նկատմամբ եւրոպական թերթերու մէջ հրատարակուած մանրամասնութիւնները ոչ թէ չափազանցուած, այլ թերևս պակաս են բաղդատմամբ տեսածներուս։

Խմբ.—Ձեր կարծիքով՝ խնդրին ծագման պատճառը ինչ է։

Պապ. [illegible] դեղիկ պատճառներ կան, և ատոնք են ըէքսիոն ու բռնապետութիւն։ Ցուլիսի խրախճանութեանց տպաւորութիւնները դեռ չանցած, օգոստոսի սկիզբները ծայր տուած էին բռնապետական հակումները։ Բաղչէի նախորդ միւֆթին (անունը չեմ կրնար կոր յիշել) հոս հոն կը պատէր և ժողովուրդը կը թելադրէր, յայտարարելով թէ ազատութիւն ու սահմանադրութիւնը քրիստոնեաներու կողմէ հնարուած է, ինչ որ հակառակ կը նկատէր Շերիաթին։ Այս կարգի հրապուրանքներով և գրգռումներով իսլամները բրիստոնեաներուն ու սահմանադրութեան դէմ կը շարժէր։ Յեղաշրջութեան առաջին օրերուն իսկ, ժողովրդեան ամեն դասակարգերուն մէջ տեսնուած խանդն ու ուրախութիւնը տակաւին չանհետացած, անոր տեղ ատելութիւնը և թշնամութիւնը ծագած էին։

Խմբ.—Այդ գրգռութիւն արքաղներուն նպատակը ինչ կրնար ըլլալ։

Պապ.—Ինչպէս պիտի երևայ կատարուած քննութիւններէն, պատճառը սա է, որ կարգ մը յետադիմականներու անձնական շահերը կը վտանգուէին ազատութեան հռչակումովը։ Այդ յետադիմականներուն անունները և ինքնութիւնները արձանագրուած են հետս բերած թուղթերուս մէջ։

Խմբ.—Ադանայի դէպքին մէջ գտնընկեց սուլթանին կամ Իզզէթին մատը կայ։

Պապ.—Իրաւ է որ այդպիսի կարծիք մը կայ, բայց չէ կարելի պնդել թէ յիշեալ անձերը նոյն շարժումին մասնակից եղած ըլլան։ Որովհետև յետադիմութեան և բռնապետութեան հակումը իսկապէս արդէն իսկ գոյութիւն ունէր Ադանայի մէջ։ Քաղաքին ազդեցիկ մարդիկը, այսինքն երկիրը փաստաբանները, բռնապետութիւնը շարունակելուն մէջ կը տեսնեն իրենց ապօրինի շահերուն ապականութիւնը։ Իրենց այդ նպատակը իրագործելու համար, տգէտ մարդիկը և կրօնական զգացումները գրգռած են։

Խմբ.—Կը պնդեն որ հայերը եղած են խռովութեանց պատճառ։ Այդ պնդումը ստոյգ է։

Պապ.—Քովս գտնուած հաստատող թուղթերով երևան պիտի ելլէ թէ այդ պնդումը (իդեա) ճշմարտութեան հակառակ է։

Խմբ.—Կըսուէր թէ հայերը Կիլիկիոյ շրջակայքը անկախութիւն հռչակել փորձած էին։ Իրաւ է ասիկա։

Պապ.—Քննութիւնները հաստատած են, թէ այդ պնդումն ալ սնոտի է։ Անկախութեան մասին գրուածներն ու խօսուածները կամ նպատակ ունին ճշմարտութիւնը խեղաթիւրելու և կամ քննութիւնները թերի կատարուելէն առաջ եկած են։

Խմբ.—Կուսակալութեան նախորդ թարգման Սիսլեան էֆ. դէպքին մասնակցութիւն ունի։ Ձերբակալուած է։

Պապ.—Դժբաղդաբար պատերազմական ատեանը հարցաքննիչ դատաւորի պաշտօն տուած է մեր երկրին փճացմանը աշխատող այդ խաֆիէին։

Խմբ.—Ադանայի առաջնորդ Մուշեղ եպ. դէպքին մասնակցութիւն ունի։

Պապ.—Մեր քննութեանց համաձայն, առաջնորդը դէպքին մասնակից չէ։ Մեր կատարած քննութեանց կը համապատասխանէ յունուարի սկիզբէն իսկ առաջնորդին կողմէ կառավարութեան տրուած տեղեկագիրները։ Մուշեղ եպիսկ. նոյնիսկ այն [illegible] յայտարարութիւններ ըրած է կառավարին, պարզելով թէ կրնայ յառաջիկային աղէտ մը ծագիլ. ուստի հարկ եղած միջոցները ձեռք առնելու մասին զեկոյցներ եղած են առաջնորդին կողմէ, սակայն այդ յայտարարութիւնները չափազանցութեան վերագրուելով՝ ոչ մէկ միջոց ձեռք առնելու պէտք տեսնուած չէ։

Խմբ.—Զարդուածներուն թիւը որքան է, և ինչ համեմատութիւն կայ իսլամ և ոչ-իսլամ սպանեալներուն միջև։

Պապ.—Բարանդադէ Զինի փաշայի պատրաստած տեղեկագրին համաձայն, նահանգայ սերնդի վրա։ Ի վերուստ տրված այդ բիբլիական օրէնքից շեղվելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ստորացումն կնոջ՝ ծննդաբերողի առանձնայատուկ բարձր կոչման։ Ֆիզիկական աշխատանքը ամբողջովին յանձնարարելով տղամարդուն, մեծ մտածողը՝ այդ աշխատանքից խուսափող, յաւելեալ արժէքներով շուայտ և զեղխ կեանք անցկացնող կամ վերջինների տիրապետութիւնը առաւել ամրապնդող հիմնարկութիւններում սողոսկող արուների յանցաւոր շեղումը նա միանգամայն հաւասար է ընդունում կանանց բնական կոչման դէմ մեղանչելու հետ։ Սակայն կնոջ շեղման պրօցէսն աւելի ուշ է սկսվել, քան տղամարդունը, որը իր նմանին շահագործելու տենչը հասցրել է անդուսպ սահմանների։ Զէ որ շահագործող ֆէօդալի, սենեօրի, ճորտատիրոջ կանայք շարունակում էին տակաւին մնալ իրանց սեռական կոչման բարձրութեան վրա՝ ամենայն հնազանդութեամբ ծնելով զաւակներ... Թէպէտ կնոջ շեղումը արտայայտվել է միմիայն պրօստիտուցիայի և արգանդի պտղի երբեմնակի սպանման մէջ, սակայն դրանք որպէս բացառութիւններ չեն կարող նեմացնել օրինապահ կանանց անձնազոհութիւնը։ Եւ հէնց այդօրինակ բնական օրինապահութեամբ նրանք ձեռք են բերել տղամարդկանց վրա իշխելու զօրութիւնը, այն տղամարդկանց վրա, որոնց ի վերուստ տրված օրէնքից շեղումը զրկել էր նրանց միանգամայն նոյնիսկ մարդկային բանականութիւնից։ Ընդունված է ասել, թէ կինը, գլխաւորապէս բարձր դասակարգից և անդաւակ, դարձել է այնքան գրաւիչ, այնքան հմայիչ, որ տղամարդուն վերջնականապէս տիրապետել է։ Սակայն դա աբսուրդ է, անարդար կարծիք, որովհետև տղամարդուն տիրապետողը ոչ թէ այդպիսի կինն է, այլ մարդը։

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

—

Համառուսական վիթխարի շարժման բոցավառ առկայծումները սոցիալական բոլոր ճնշված խաւերի ահեղագոչ շեփորն էր...

Դարերի ծանր կնիքը անխղճօրէն շահագործվողի թիկունքին դրոշմել էր անվերջ կորանալու սպառնալիքը, և ծով կեանքի կատաղի ալեկոծումների յատակից՝ կաշկանդված մարդկային իրաւունքն էր նետվել ալեծուփ հրապարակի վրա։

Ցախուռն էր ճնշվածների գրոհը ընդդէմ խորարմատ բռնաբարութեան։ Եւ յամառ ու անողոք՝ դէմ առ դէմ կանգնած էին հակոտնեաները... Համամարդկային ցաւ ու վշտով համակված այդ ծանր օրերը յղի էին ազատագրման լուսաբերովը։ Եւ ճակատամարտը չը յապաղեց...

Դարերով ճնշված, դարերով շահագործված ասունի կորացած մէջքը ճգնում էր շտկվել ու գերութեան անարգ շղթայի շառաչիւնով համայն բնութիւնը զարթեցնել իր խորունկ ննջից։ Շանթալից գրոհով գոռ մարտի հրաւէրն էր շպրտում յետաշարժ ոյժերին, որոնց հակաշաւանքի նշանաբանն էր անխիտիր սրի և հրի վայրագ թագաւորութիւնն ու միջնադարեան բիրտ վանդալականութիւնը։

Հոսեցին արեան գետեր, կազմվեցին կարմիր լճակներ ու ծովեր, և արիւն-արշալոյսը ճգնեց փարատել ծանրակ մղձաւանջը. արձակվեցին դարերով պատանձված լեզուի կապանքները, հնչվեցին ազատութեան ներբողներ, հուժկու ու սպառնալից խօսեցին լեզուները...

Հրապարակ նետվեց «երկրի աղը» իր սպառնական պօստուլատներով—մի երկայրի սուր, որով այդ «անթիւ շառերը», «յաւելեալ արժէքներին» անլուր զոհաբերվողներն իրանց անակնկալ ցասմամբ ուժգնապէս երերեցին յաւիտենական հռչակված ու սրբագործված հասարակական կարգերը...

Ահա պատմական այդ խոշոր մօմենտից սկսած նոր կերպարանք ստացաւ «գերիներից» նաև ամենանեղ ազատագրման հարցը. դա կանանց սեռն էր, որը՝ կեանքի մութ յատակում տառապող բանուորականութեան հուժկու բողոքի ելևէջներում՝ երբեմնակի անդրադարձնում էր նաև կնոջ դժգոհութեան գոչը։ Թէպէտ նրա բողոքը թոյլ էր, հազիւ նշմարելի, սակայն իր վիճակի ողբերգականութիւնը նա կրում էր և է իր վրա՝ սկսած այն օրից, երբ մասնաւոր սեփականութեան իրաւունքը հանրութեան սեղբազան սանկցիան ստացաւ և դրութեան գերակշռութիւնը մատրիարխատից թեքվեց դէպի տղամարդկանց տիրապետութիւնը։ Արդարև հին, շատ հին է այդ պատմութիւնը, աւելի հին քան ինքը գերութիւնը՝ բառիս ընդհանուր իմաստով, որովհետև կինը գերիների գերին է... Կնոջ ստորադրեալ վիճակը պայմանաւորված լինելով, ինչպէս ասացինք, մասնաւոր սեփականութեան սկզբնաւորութեան հետ, նա ինքն էլ, հետևաբար, ներկայանում էր իբրև մի իր՝ միւս իրերի շարքում։ Պետական շինարարութեան մէջ անբարբառ, ընտանեկան կեանքի մէջ պասիվ ու ճնշված՝ այդ մէկ կողմից։ համատարած պրօստիտուցիան, աւանդական ընդհանրացած դաւաճանութիւնը՝ միւս կողմից։ Այդ երկու հանգամանքը կնոջ անհատական ու հասարակական կերպարանքը դարձրել են վերջին ծայր այլանդակ ու աննօրմալ։ Այս դժբաղդ, ցաւոտ հարցը ինչպէս դարմանել, ինչպէս բժշկել խորունկ խոցերը։ Ընդհանրացած երևոյթ է բժշկականութեան մէջ այն պահանջը, որ որևէ հիւանդութիւն դարմանելու առաջին պայմանն է՝ միջավայրը մաքրել ցաւի վրա ազդող բոլոր պատճառներից։ Ի՞նչ օգուտ թշուառ հիւանդին բժշկի ազդու դեղերը, երբ նա զուրկ է անհրաժեշտ թթուածնից, սննդից ու յարմար ընակարանից։ Ի՞նչպէս լուծել կանանց ազատագրման հարցը ներկայ պայմաններում, երբ նա անխուսափելիօրէն պիտի ենթարկվի տնտեսական ու քաղաքական բոլոր հակասութիւնների անընդհատ զրահման, երբ նրա համար առաջինը՝ սընունդ է, երկրորդը՝ մթնոլորտ։ Կանանց ազատագրումը առանց վերոյիշեալ երկու ֆակտորներից բղխած արգելքների տապալման՝ կը մնայ սոսկ մի «էմանսիպացիայի» խնդիր, մի մակերեսային հարց, որը սայօն-կաբինետային պալլիատիվներից չէ կարող այն կողմը անցնել։

Կանանց հարցի լուծումը առաւել խոր պատճառների մէջ պէտք է որոնել, աւելի հեռուն նայել. այն ժամանակ մենք կը տեսնենք, որ նա ամենասերտ կապերով կապված է բանուորականութեան ազատագրման հետ։ Ինչպէս վերը շեշտել էինք, որ նրա ինքնուրոյնութեան կորուստը անմիջապէս պայմանաւորված է մասնաւոր սեփականութեան ծագման հետ, այնպէս էլ հարցի վանճական լուծումը անխուսափելիօրէն յենված պիտի լինի սոցիալական այդ հիմնական չարիքի վերացման վրա։

Հարկաւ մարդկային հասարակութեան այս կիսի ազատագրման հարցը ունեցել է և այժմ էլ ունի լուծման մի քանի կերպեր. դրանք մեծ մասամբ ողորմելի պալլիատիվներ են, երբեմն պարագօքսալ մարերով, որոնք կանանց՝ անհատական և հասարակական միջավայրերում՝ յայտարարել են իբրև կիսաբացասական ու բացասական յատկութիւններով էակներ. սակայն դրանք ոչ թէ հարցի լուծման էյտապներն են, այլ կնճռոտող ու առաւել քարդ ցանցերով պարուրող երկեր... լոկ երկեր։ Անշուշտ այդօրինակ լուծումը մի բարդ հարցի՝ արդիւնք է իդեալիստական աշխարհահայեացքի, որի պիօներները միանգամայն հեռու են իրերը իրանց իսկական էութեամբ տեսնելուց. նրանք սիրում ու գգւում են խարուսիկ պարուրանքը, անհիւթ պատրանքը. նրանք եթերի մարդիկ են, ինչ արած... Արդարև, իդէալիստ փիլիսոփաներն ու ֆեմինիստները շարժման պարագուխները երևակայել են արդեօք երբևիցէ, որ մարդկային հասարակութեան այդ առաջին էկսը գերված է միմիայն մասնաւոր սեփականութեան ինստիտուտով. մտածել են, որ իգական սեռը ոչ միայն կաշկանդված է սեռական յարաբերութեամբ, այլ և շղթայված է տընտեսական ու քաղաքական այնպիսի կապանքներով, որոնց հանգոյցների արձակելը տնտեսական զարգացման որոշ ֆազիսների կարօտութիւն ունի։ Ոչ։ Ո՛չ, որովհետև բարոյականութիւնը բարոյականութեան մէջ են որոնել, պրօստիտուցիան պրօստիտուցիայի մէջ... Տեսնենք սակայն ինչ են ասում գրական աշխարհի որոշ ուղղութեան տիտանները, փիլիսոփաները, որոնք բազմիցս հրապարակ են իջել իրանց կատարելագործված փիլիսոփայական սիստեմներով։

Սկսենք ութսունամեայ մեծ մօրալիստ փիլիսոփայ Տօլստոյից, որը կնոջ մասին գրած իր նշանաւոր տրակտատում կնոջ էութիւնն ու նշանակութիւնը գտել է բացառապէս ծննդաբերութեան մէջ։

«Ինչպէս ասված է Աստուածաշնչի մէջ, տղամարդուն և կնոջը տրված են հետևեալ օրէնքները. տղամարդուն՝ աշխատանք, կընոջը՝ ծննդաբերութիւն»—ահա ինչ խօսքերով է հրապարակ իջնում բիբլիական Տօլստոյը։ Երկրորդը պարզապէս հանդէս է բերում փիլիսոփայի ամբողջ աշխարհահայեացքը, դաւանանքը ներկայ հարցում։ Նա տրակտատի հէնց առաջին տողերով կնոջը խստօրէն արտաքսում է բոլոր քաղաքական, հասարակական և տնտեսական ասպարէզներից և տալիս նրան էգի համար սպեցիֆիկ շրջանակը, որից դուրս գալու ամենափոքր յանդգնութիւնը վտանգ է սպառնում ոչ միայն ներկայ սերնդին, այլ պիտի արտայայտվի զօրեղ կերպով մանաւանդ յետագայ սերնդի վրա։ Ի վերուստ տրված այդ բիբլիական օրէնքից շեղվելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ստորացումն կնոջ՝ ծննդաբերողի առանձնայատուկ բարձր կոչման։ Ֆիզիկական աշխատանքը ամբողջովին յանձնարարելով տղամարդուն, մեծ մտածողը՝ այդ աշխատանքից խուսափող, յաւելեալ արժէքներով շուայտ և զեղխ կեանք անցկացնող կամ վերջինների տիրապետութիւնը առաւել ամրապնդող հիմնարկութիւններում սողոսկող արուների յանցաւոր շեղումը նա միանգամայն հաւասար է ընդունում կանանց բնական կոչման դէմ մեղանչելու հետ։ Սակայն կնոջ շեղման պրօցէսն աւելի ուշ է սկսվել, քան տղամարդունը, որը իր նմանին շահագործելու տենչը հասցրել է անդուսպ սահմանների։ Զէ որ շահագործող ֆէօդալի, սենեօրի, ճորտատիրոջ կանայք շարունակում էին տակաւին մնալ իրանց սեռական կոչման բարձրութեան վրա՝ ամենայն հնազանդութեամբ ծնելով զաւակներ... Թէպէտ կնոջ շեղումը արտայայտվել է միմիայն պրօստիտուցիայի և արգանդի պտղի երբեմնակի սպանման մէջ, սակայն դրանք որպէս բացառութիւններ չեն կարող նեմացնել օրինապահ կանանց անձնազոհութիւնը։ Եւ հէնց այդօրինակ բնական օրինապահութեամբ նրանք ձեռք են բերել տղամարդկանց վրա իշխելու զօրութիւնը, այն տղամարդկանց վրա, որոնց ի վերուստ տրված օրէնքից շեղումը զրկել էր նրանց միանգամայն նոյնիսկ մարդկային բանականութիւնից։ Ընդունված է ասել, թէ կինը, գլխաւորապէս բարձր դասակարգից և անդաւակ, դարձել է այնքան գրաւիչ, այնքան հմայիչ, որ տղամարդուն վերջնականապէս տիրապետել է։ Սակայն դա աբսուրդ է, անարդար կարծիք, որովհետև տղամարդուն տիրապետողը ոչ թէ այդպիսի կինն է, այլ մարը։

(Կը շարունակվի)

գին ամեն կողմերը քան հազար ութը հոգի ջարդուած են, որոնց վեց հարիւր քանը իսլամ և մնացեալ տասնրինը հազար չորս հարիւրը ոչ-իսլամ են։ Սպանուած ոչ-իսլամներէն 418-ը հին ասորի են, 162-ը՝ քաղդէացի, 65-ը՝ քաղդէացի կաթոլիկ, 210-ը՝ հայ կաթոլիկ, 655-ը՝ բողոքական, 99-ը՝ յոյն և մնացեալը՝ հայ։ Այս թուական ճշմարտութիւնը շատ լաւ կապացուցանէ, թէ այդ շարժումը միայն հայոց դէմ չէր։

Խմբ.—Ադանայի պատերազմական ատեանի մասին ինչ կարծիք ունիք։

Պապ.—Սա մէկ քանի օրուան մէջ պաշտօնապէս երևան պիտի ելլէ թէ պատերազմ. ատեանին առած վճիռները սխալ ձերձ չէին։ Այս առթիւ իրողութիւն մը պատմեմ ձեզի. Կիրակոս Քէշիշեան անուն հայ մը ապրիլ 1-ի օրը օսմ. բանքան երթալով շուշմայի փոխարէն 400 ոսկի կառնէ։ Քիչ մը առաջ սկսած խռովութիւնները ճիշդ այդ միջոցին կը տարածուին նաև բանքային առվեր։ Մարդը դուրս չելլեր վախէն։ Բանքային մէջ կը պահուըտի չորս օր։ Բանքային տնօրէն պ. Դրաբօվկի և բանքային բոլոր պաշտօնեաներն ու ծառայողները վկայութիւն կուտան, թէ այդպէս էր իրողութիւնը. սակայն պատերազմական ատեանը, Միսլեանի և Բաղդադիզադէի պէս ատեանը, Միսլեանի և Բաղդադիզադէի պէս մարդոց քննախնդիր քննութիւններն ու յայտարարութիւնները նկատի առնելով, Կիրակոսը մահուան դատապարտած է, իբր մասնակից ջարդին։

Խմբ.—Ամբողջ նահանգին մէջ հրքան նիւթական վնաս կայ և հրքան տուներ այրած են։

Պապ.—Նոր կուսակալ Զիհնի փաշայի առաջ բերած թիւերով կը հաստատուի, թէ հանրային հարստութեան երկու երրորդը փճացած է։ Ամբողջ նահանգին մէջ գտնուող բնակարաններուն մէկ վեցերորդը այրուած ու քանդուած է։

Խմբ.—Ադանայի մէջ երկաթ ատեն պիտի պաշտօնավարէ պատերազմական ատեանը։

Պապ.—Կերևայ թէ պատերազմական ատեանը պիտի ցրուի իր բռնած ընթացքին համար։

Խմբ.—Ղրկուած նպաստները արդարասիրութեամբ և հաւասարութեամբ կը բաշխուին։

Պապ.—Այո, նպաստներու բաշխումին ատեն կը յարգուի արդարասիրութիւնը։ Նպաստները ոչ-իսլամներուն կը բաժնուին, որովհետև վնասուածները միայն քրիստոնեաներն են, և մասնաւորապէս հայերը։

Խմբ.—Ադանայի մէջ ամեն մարդ իր գործով կը զբաղի՞ այլևս։

Պապ.—Անդորրութիւն կը տիրէ, սակայն գործ չկայ։ Ամեն մարդ ինչ ընելը շուարած է։

Խմբ.—Անգլիոյ հիւպատոսին վիրաւորուելուն նկատմամբ ինչ դիտէք։

Պապ.—Նոյն ինքն անգլիակ. հիւպատոսէն բացատրութիւններ խնդրեցի այդ դէպքի մասին։ Իրողութիւնը սա է. «Խռովութիւնը նոր սկսած էր։ Ամեն կողմ վախ կը տիրէր։ Փողոց ելայ։ Ցիմարի երեսոյթով մարդ մը իմ վրաս կը վազէր ուղղակի և խոյս կուտար։ Ուզեցի առջևը կտրել և ինչ ըլլալու մասին բացատրութիւն ուզել։ Կերևայ թէ փախստականը իմ աճապարանքս դէշ մըտքով հասկցած ըլլալուն՝ ձեռքը գտնուած բէվոլվէրը վրաս ուղղեց ու կրակ ըրաւ և փախաւ գնաց»։

Խմբ.—Վնասուածները այսուհետև ինչպէս ապրուստ պիտի ճարեն։

Պապ.—Առայժմ ապրուստի ոևէ միջոց չկայ։ Հայերուն մեծ մասը Ամերիկա և ուրիշ տեղեր գաղթելու վրայ է։ Սակայն կառավարութիւնը կարգիլէ։

Յաջորդ համարում լոյս կընծայենք Կ. Պոլսում հրատարակվող «Օսմ. Լոյդ» լրագրի աշխատակիցներից մէկի ունեցած տեսակցութիւնը Պապիկեանի հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԵՄՍՏՎԱԾԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՆԻՍՏԸ

—

Յուլիսի 23-ին, երեկոյեան ժամը 8½-ին, քաղ. դումայի դահլիճում տեղի ունեցաւ առաջին սեկցիայի երկրորդ նիստը Գվազավայի նախագահութեամբ։

Ներկայ էին մօտ 25 հոգի։

Նախորդ նիստում ժողովը վերջացրած լինելով մանր զեմստվային միութիւնների կամ հաչէյկաների խնդիրը, ուրիշ խօսքով զեմստվային ինքնավարութեան հաստատութեան հիմքը որոշելուց յետոյ, ընդհանրապէս զբաղվեց այն հարցով՝ թէ քանի՞ յարկանի կամ ատիճանի պէտք է լինի այդ զեմստվոյի շէնքը, երկատիճան, երեք-ատիճան թէ՞ չորս-ատիճանի։

Այդ առիթով արտայայտվեցին զանազան կարծիքներ։

Ա. Խատիսեան յայտնում է իրան կողմնակից երեք-ատիճանեան զեմստվոյի՝ մանր զեմստ. միութիւններ բայօնական և օբլաստնոյ (մի քանի նահանգները միացած)։ Այդ ճառախօսը ընդհանուր է համարում, որովհետև ընդունված է նաև ռուսաց պետական պրակտիկայում՝ արքունական պալատների նկատմամբ։ Իսկ ընդունել չորրորդը, մի ընդհանուր համակվկասեան զեկավար զեմստվային մարմին, չը նայելով որ մի քանի տարիներ առաջ ինքը պաշտպանում էր, այժմ չէ կարող, քանի որ ներկայումս փոխված են պայմանները։

Իշխ. Ի. Աբխազի նկատում է, որ անցեալ նիստում այն կարծիքն յայտնվեց, որ նահանգականի ու միջինի մասին խօսել կարելի է միայն եաչէյկաներին նայելով։ Եթէ օրինակ Թիֆլիսի նահանգը վերածենք 30 մանր զեմստ. միութիւնների, ուրեմն դրանից ուղղակի կարելի է անցնել նահանգականի։ Պէտք է ասեմ, որ մինիսարութեան կարծիքն էլ ընդունում է, որ ֆինանսական ներկայ ծանր պայմաններում կարելի է բաւականանալ երկատիճան զեմստվոյով, այսինքն մանր զեմստ. միութիւններից ուղղակի անցնել նահանգականին։

Դեմիդովը զուտ ֆինանսական և բիւջետային տեսակէտից պաշտպանում է երկատիճանեան ծրագիրը։ Երրորդ ատիճանի մասին խօսել դժուարանում է, որովհետև նախ պէտք է լսել ֆինանսական սեկցիայի կարծիքը։ Իսկ մինչ այդ սկզբունքով ինքը ընդունում է մանր զեմստ. միութիւնից յետոյ բայօնականը և ապա նահանգականը և դէմ է գաւառականի ու օբլաստնոյի։

Ռցխիլաձէն նկատում է, որ զեմստվային ատիճանների բաժանումը պէտք է յարմարեցնել գիւղերին, որովհետև ներկայի առանձին կամ մի քանի միացած գիւղերն են իսկապէս կազմում մանր զեմստվ. միութիւնները։ Ուրեմն այդ գիւղերն են կազմում առաջին ատիճանը, երկրորդ ատիճանը գիւղատնտեսական շրջանի քաղաքներն են, որ կազմում են գաւառական կամ բայօնական զեմստվոներ, երրորդ ատիճանը, բնականաբար, կը լինի նահանգական քաղաքը։

Ճառախօսներից մէկը թիւերով ցոյց է տալիս, որ նոյնիսկ ամենաչնչին վարձարութիւն տալով գաւառական զեմստվային նախագահին ու վարչութեան անդամներին՝ այնուամենայնիւ Ռուսաստանի ժողովուրդը մի քանի տարի առաջ մեծ տրտունջներ էր յայտնում զեմստվոների դէմ, թէ նրանք ոչինչ չեն տալիս, բացի ծանր բեռ լինելուց։ Արդ՝ եթէ ռուսական ժողովրդի համար այդ ծանր է, Կովկասի աղքատ ժողովրդի համար աւելի ևս ծանր պիտի լինի։ Հիմնվելով այդ հանգամանքի վրա, ճառախօսը պաշտպանում է ներկայ գիւղական վարչութիւնը, քանի որ մանր զեմստվ. սահմանները անորոշ են, տալով նրան, փոքր ի շատէ, տնտեսական բնոյթ, և ապա երկրորդը ըն ունում է գաւառականը և երրորդը՝ նահանգականը։

Բժ. Ֆիշէր առարկում է նախորդ ճառախօսին, մատնանշելով որ առաջ բերված թիւերը Ռուսաստանի ամենայտ ընկած գաւառից են վերցված, և հակադրելով նրան Ռուսաստանի միջին գաւառներից մէկը՝ օրինակներով ապացուցանում է, որ Կովկասեան ժողովուրդը ոչնչով աղքատ չէ ռուսականից։ Մեջբերում պաշտպանում է երեքատիճանեան զեմստվոն, այսինքն մանր միութիւններ երկու-երեք գաւառներ միացած և երրորդը՝ օբլաստնոյ։

Ալ. Քալանթար նկատում է, որ մանր զեմստ. միութիւնների էութիւնը հասկանալի է. ինչ վերաբերում է նրա ճիշդ սահմանների որոշմանը, այդ կը պարզի սեկցիան միայն, այնպէս որ այդ առիթով այստեղ տեղի ունեցող խօսակցութիւնները կը լինեն լոկ կարծիքներ, որոնք դրական նշանակութիւն ունենալ չեն կարող, քանի որ հաստատուն տեղեկութիւն չը կայ։ Լաւ կը լիներ, եթէ այդ կարծիքները զեկուցումների վերածվէին։ Նրա կարծիքով՝ սեկցիայի աշխատանքները պէտք է տանել այնպէս, որ „ուսումնասիրված լինեն ամեն տեսակ կոմբինացիաներ։

Զէլօկայէվ մատնանշում է, որ Թիֆլիսի նահանգի գիւղերը շատ աղքատ են, հաւաքված պաշտօնական թիւերը սխալ պատկեր են տալիս, ծանրաբեռնված են զանազան տուրքերով, որոնց դէմ բազմաթիւ բողոքներ կան։ Ուստի մանր զեմստվ. միութիւնները վտանգաւոր է համարում և պէտք չէ համարում առայժմ մտցնել, որովհետև կարող է իր ծանր ծախքերով հիասթափութիւն պատճառել նրան։ Առաջարկում է բաւականանալ սկզբում երկատիճան զեմստվոյով՝ բայօնականով կամ ուչաստկայինով և ապա նահանգականով։ Համակովկասեանը համարում է վաղաժամ և անհամապատասխան ժամանակակից պահանջներին։

Բժ. Փիշէր նկատում է նախորդ ճառախօսին, որ Թիֆլիսի նահանգի ժողովուրդը ամենից աւելի ծանրաբեռնված է նատուրալ տուրքերով։ Դրանից է նա վախեցած։

Բժ. Լունկեվիչ նպատակայարմար է համարում յետաձգել հարցի լուծումը և խնդրել ֆինանսական ու բիւջետային մասնաժողովին տեղեկութիւններ տալ այդ խնդրի մասին։

Նախագահը եզրափակում է ժողովի արտայայտած կարծիքները, որոնցից երևում է, որ ընդհանուր կովկասեան կենտրոնական (краевой) զեմստվօ ցանկալի չէ, իսկ եթէ ծագեն ընդհանուր խնդիրներ, կարելի է լուծել նրանց այլ կերպ՝ համագումարների միջոցով։ Ընդունվում է նահանգականը։ Այդպիսով առաջին սեկցիան ընդունել է մանր զեմստվ. միութիւն և նահանգականը, այսինքն առաջին և երրորդ ատիճանը, մնում է որոշել այդ երկուսը իրար հետ շաղկապող օղակի՝ բայօնականի հարցը։

Սակայն ժողովականներից մի քանիսը նկատում են, որ կայ այդ առիթով երկու հակառակ կարծիք. մէկը պաշտպանում է երկատիճան զեմստվօ նահանգում, իսկ միւսը՝ երեք-ատիճանեան։ Ժողովը նպատակայարմար է համարում այդ խնդրով զբաղվել մանր զեմստվոյի սահմանները ճիշդ որոշելուց յետոյ միայն։

Առաջին սեկցիան որոշում է առաջիկայում իր նիստերը գումարել հինգշաբթի օրերը։ Երկրորդ սեկցիան՝ ուրբաթ օրերը, իսկ երրորդ՝ չորեքշաբթի օրերը։

Նիստը փակվում է ժամը 11-ին։

Լ. Դ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Դանագիրմազ (Ալէքս. գ.), 10 յուլիսի

Յուլիսի 1-ին նահապետական խաւարի մէջ թմրած մեր այս գիւղը եկան Թիֆլիսից Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. միջոցներով տեղս ուղարկված՝ տնայնագործական արհեստի մասնագէտներ Յովհ. և Մարտիրոս Արիստակէսեանները և կաթնատնտեսութեան ինստրուկտոր Լ. Զարաֆեանը։ Արիստակէսեանները բերելով իրանց հետ ընկերութիւնից մեր գիւղին նուիրված ջուլհակութեան տոբը՝ տեղաւորեցին այն Մ. Աֆանդեանի տան մի սենեակում, առանց քրէհի։ Հաւաքելով գիւղացիներին, մասնագէտներից իւրաքանչիւրը իր մասնագիտութեան մասին սկսեց դասախօսութիւններ կարդալ, շեշտելով իր արհեստի տուած օգուտը լուսաւորված երկիրներում։ Գիւղացիների փոքր ի շատէ բանիմաց մասը նկատելով ջուլհակութեան տալիք օգուտը ապագայում, մասնաւանդ մեր գիւղում, ուր վեց ամիս ձմեռ է լինում և գիւղացիք այդ ժամանակամիջոցում հաւաքվում են դամբերում և հէքիաթներով ու իրար բամբասելով են օրերն անցկացնում, առանց մի կոպէկ աշխատելու մինչև գարունը, ցանկութիւն յայտնեց ուղարկել իր երեխաները սովորելու։ Այժմ երկու սեռի պատանիներ հաւաքվելով Արիստակէսեանների շուրջը՝ սովորում են ջուլհակութեան արհեստը։

Յուլիսի 2-ին մասնագէտները գնացին Բաշ-Աբարան, որտեղ նոյնպէս նոյն նպատակով դասախօսեցին։ Դասախօսութեան ազդեցութեան տակ՝ բաշ-աբարանցիք դիմեցին Արիստակէսեաններին՝ խնդրելով իրանց գիւղումն էլ բանալ ջուլհականոց։ Արիստակէսեանները խոստացան կատարել այդ խնդիրքը։

Ապա էլի վերադառնալով մեր գիւղ՝ ինստրուկտոր Լ. Զարաֆեանը իր գործիքներով բարձրացաւ մեր ամբարանոցը, որտեղ մնաց ութն օր շարունակ և փորձնական ցուցմունքներ տուեց գիւղացիներին իւղ ու պանիր պատրաստելու մասին։ Այդտեղ գիւղացիները տեսնելով եւրոպական գործիքների առաւելութիւնը իւղ ու պանրի [illegible] 1½ պուդ կաթից 20 բօպէում պատրաստվեց 3 և կէս ֆունտ մաքուր իւղ, բացի պանրից), մի քանի երիտասարդներ ցանկութիւն յայտնեցին ունենալ նոր ձևի գործիքներ և, եթէ հնարաւոր լինի, արօտատեղի ձեռք բերել մեր սարում։

Յարութիւն Դաւիթեանց

—

Նոր-Բայազէտ, 22 յուլիսի

Մի տարուց աւելի է, ինչ ձգձգվում էր մեր եկեղեցիների համար նոր երէցփոխ ընտրելու հարցը։ Նախկին երէցփոխ Խաչատրեանը, որ մօտ 20 տարի վարել է այդ պաշտօնը, մի քանի անգամ հրաժարական է տուել, և այդ առիթով ծխ. ժողով գումարելով՝ խնդրել, յորդորել են, որ երէցփոխը յետ վերցնէ իր հրաժարականը, քանի որ ոչ ոք չէր փոխարինում մեղանում հին երէցփոխին։ Հ. Խաչատրեանը իր երէցփոխութեան միջոցին ճիգ է թափել եկեղեցին բարեզարդելու և մեծ օգնութիւն է հասցրել նոյնիսկ ուսումնարանական և այլ հասարակական գործերին։ Նա գործունեայ անձնաւորութիւն է և երէցփոխի պաշտօնով ծառայում էր նոյնիսկ երկու եկեղեցիներում միասին։ Նա վերջերս իր միջոցներով շինել է տալիս մեր քաղ. նորակառոյց ուսումնարանի մի մասը, ծախսելով մօտ 10,000 ր.։

Այժմ, հանգամանքներից ստիպված, Խաչատրեանը պնդում է իր հրաժարականի վրա։ Գործակալի պաշտօնակատարը ամսիս 5-ին նշանակեց ծխ. ժողով։ Երէցփոխի պաշտօնի համար միաձայն ընտրվեց Ե. Տէր-Վարդանեանց, որի ընտրութիւնը կարելի է աջող համարել։ Գ. Սինանեան

—

Մանգլիս, 22 յուլիսի

Այստեղի եկեղ. ծխ. ուսումնարանն էլ շատ անապահով է. ոչ մի ապահովութիւն և հաստատ աղբիւր չունի. ամեն տարի տրրվում է մի ներկայացում և բացի դրանից ամարանոց եկող հայ ընտանիքներից հանգանակութիւն է լինում. ահա այս ձևով է պահվում այստեղի հայոց դպրոցը։ Եկեղեցին էլ ինքան հնար է ունենում՝ օգնում է. տեղական հայ ազգաբնակութիւնը ապահով դրութիւն չունի։ Երէցփոխ-հոգաբարձու Բ. Ս. Դիդ-Զուրաբեանի հանդը և նրա անձնուիրութիւնը թէ դէպի դպրոցը և թէ դէպի եկեղեցին՝ բարձր է ամեն գովասանքից։

Ուրախալի է, որ մեր անապահով հիմնարկութիւններին վիճակվում է այդպէս ջանասէր և գործին սրտով նուիրված մարդ. յոյս կայ, որ այս տարի էլ կապահովվի այստեղի ծխական դպրոցի կեանքը։ Ամսիս 27-ին լինելու է դպրոցի օգտին ներկայացում։ Երէցփոխի շնորհիւ ցրված է տոմսակների մեծ մասը. մնացածն էլ կը տարածվի. բայց որ գլխաւորն է, երբ հոգաբարձութիւնը շրջելու լինի հանգանակութիւն անելու յօգուտ դպրոցի, ահա այդ ժամանակ ցանկալի է, որ ամարանոց եկած հայ ժողովուրդը սրանց համակրելով նպատակին իր առատ նուէրներով ապահովէ տեղական դպրոցը գոնէ մի տարով։

Եկեղ

ԽՕՂԵՐԱ

—

Պետերբուրգ, 24 յուլիսի.—Խօլերայով հիւանդացան 36, մեռան 8 հիւանդներ. կան 451 հոգի։

Վիտէբսկ.— Յուլիսի 18-ից մինչև 23-ը խօլերայից հիւանդացան 46, կասկածելի հիւանդացողներ կային 5, մեռան 25 հոգի։ Վերջին օրերը հիւանդացան 9, մեռան 6 հոգի։

Ռիգա.—Գաւառում հիւանդացան 2, մեռաւ 1 հոգի։

Արխանգելսկ.—Քաղաքում հիւանդացան 2, մեռաւ 1 հոգի։ Գաւառում հիւանդացան 8, մեռան 3 հոգի։

Եարօսլաւլ.—Օր ու գիշերվայ ընթացքում հիւանդացան Ռիբինսկում գաւառի հետ. միասին 7, մեռան 4 հոգի։ Եարօսլաւլում գաւառի հետ միասին հիւանդացան 4, մեռան 3 հոգի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Առաջիկայ օգոստոսի 24-ին լրանում է Կովկասի նուաճման յիսնամեակը։ Որովհետև այդ օրը տօնահանդէս պէտք է լինի, ուստի Թիֆլիսի նահանգապետը գիմել է Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին՝ խնդրելով կարելոյն չափ կարճ ժամանակամիջոցում տեղեկացնել՝ թէ քաղաքային ինքնավարութիւնը մասնակցելու է արդեօք յիշեալ տօնահանդէսին և ինչ ձևով։

✦ Այս տարի արհեստի ուսուցման հետաքրքրական փորձեր կատարվեցին մեր գաւառական այնպիսի խուլ անկիւններից մէկում, ինչպէս է Հին-Նախիջևանի գաւառի Գէօմուր գիւղը։ Այնտեղ Զատկից յետոյ բացվել էր ջուլհակութեան մի արհեստանոց, իսկ յունիս ամսից մի կաթնարան, որոնք ծանօթացնում էին ժողովրդին ջուլհակութեան և կաթնատնտեսութեան հետ։ Ղեկավարներն էին տեղական ուսուցիչ Պ. Ղարախանեան և վարպետուհի Հ. Տէր-Աւագեան, որոնք սովորել են այդ մասնագիտութիւնները անցեալ տարի Համամլիի ամարային դասընթացքներում։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ստացել է մեծ ջրատափներ՝ Աւճալայի ջրերի [illegible] ճիշդ քանակը որոշելու նպատակով։

✦ Թիֆլիսի Զրկիչեանց ս. Կարապետ եկեղեցու միաբան Սիմէօն քահանայ Աբրահամեանը ամսիս 25-ին կնքեց իր մահկանացուն։ Հանգուցեալը վերջին տարիներս, կորցնելով իր տեսողութիւնը, գտնվում էր վերին ատիճանի թշուառ պայմաններում։

✦ Յունիսի 24-ին, երեկոյեան ժամը 6-ին, Մահեխի բանտից ազատել են մօտ եօթ ամիս սրանից առաջ «Դաշնակցութիւն» կուսակցութեան պատկանելու մէջ կասկածվելու համար կալանաւորված Երևանեան հրապարակի վրա գտնվող «Փարոս» գրավաճառոցի տէր Նիկ. Մատինեանին և Ներսիսեան գպրոցի ստորին դասարանների ուսուցիչ Արսէն Շահրազանցին։

✦ Տեղեկութիւններ ստանալով, որ կոզոպտիչների աւազակային խմբի անդամները Արշակ Ղազարեանը և Բարսեղ Մուրադեանը ու այլ դեռ ևս անյայտ անձինք ապաստանել են Մամէդ-Ալի Հիւսէյին-օղլուն և Բերէսուով գօրօղօվլին, ոստիկանութիւնը հսկողութիւն նշանակեց, և վերոյիշեալ Ղազարեանը և Մուրադեանը ձերբակալվեցին «Բէնօմէ» գինետան մէջ, կրուզենշտէրնսկայա փողոցի վրա։ Կէս ժամից յետոյ կալանաւորվեց այդ գինետունն եկած և նրանց ընկերակից Մելիք-Թադէոսեանցը։ Անձնական խուզարկութեան ենթարկվելով, ոչինչ կասկածելի բան չը գտնվեց նրանց մօտ, բայց Ղազարեանի բնակարանում, Շէմախինսկայա փողոցի վրա, գտնվեցին բրաունինգ ատրճանակի 50 փամփուշտ, 1 խէնչալ, ֆիննական դանակ, իսկ Մուրադեանի բնակարանում 3 անլէգալ գրականութիւն, 3 լուսանկար և Մելիք-Թադէոսեանցի մօտ գտնվեց զանազան գրագրութիւն։ Ապա Ղազարեանի մի ուրիշ բնակարանում գտնվեց 7 փամփուշտով լցված բրաունինգ ատրճանակ և մի բէբութ։

✦ Փօթիի հայոց եկեղեցու հոգաբարձութիւնը յանձին նախագահ Ա. Ապրիլեանի իր շնորհակալութիւնն է յայտնում Մեծ Իշխանի Բօրժոմի կալուածի կառավարիչ Պ. Զ. Վինօգրադովին Փօթիի հայոց եկեղեցու համար 3,000 հատ կենդանի ցանկապատ նուիրելուն համար։

✦ Երևանեան նահանգում ռուբօտնիկ աղանդաւորների դէմ մաքառելու նպատակով՝ կառուցվում է ռուսադաւան եկեղեցի։

✦ Անդրկովկասի երկաթուղու Շօրապան կայարանում յուլիսի 16-ի գիշերվայ ժամը 10-ին իր բնակարանում ատրճանակի մի քանի զնդակներով սպանված է երկաթուղու ծառայող Գէօրգի Բուխաձէ։ Սպանութիւնը վրիժառութեան արդիւնք է համարվում։ Այդ առիթով ձերբակալված 18 բանտարներ բերված են Թիֆլիս և բանտարկված Մետեխի բանտում։ Ինչպէս հաղորդում են, յիշեալ կայարանի բոլոր բանտարները, բացի 10 հոգուց, այդ սպանութեան գործի առիթով արձակված են ծառայութիւնից։

✦ Գօրու գաւառի Կօրդի գիւղում 50 հոգուց բաղկացած գիւղացիների մի խումբ տանուտէրի օգնականի և գիւղական դատաւորի օգնականի առաջնորդութեամբ, զինված թիերով ու կացիններով, խուժեց տեղական ազնուական Իօսիֆ Կուսխեվի կալուածը և քանդեց նրա հողամասի ցանկապատը, պատճառաբանելով որ այդ հողամասը գիւղացիների սեփականութիւնն է։ Կարգը վերականգնելու համար կանչվել են սարժանիներ, որից յետոյ միայն գիւղացիները ցրվել են։

✦ Փօթիում յուլ. 16-ին, տեղական բնակիչ Վիսարիօն Զիլիչվիլին անտառից բերել է տուն իր հարազատ եղբօր՝ Սօլօմօնի դիակը, բացատրելով որ ճաշի ժամանակ երկու անյայտ անձնաւորութիւններ վրա տուին և սպանեցին նրան։ Քննութիւնը պարզել է, որ հէնց ինքն է իր հարազատ եղբօրը սպանել կացնով։ Վիսարիօնը կալանաւորված է։

✦ Կվիրիլիում տեղական քաղաքային դպրոցի մի քանի աշակերտներ, օգտվելով դպրոցի շինութեան ազատ լինելուց, հաւաքվում են ամրտեղ խնճոյքի։ Լուսադէմին առաջարկվում է խմել Նիօրաձէի կենացը։ Երիտասարդներից մէկը, Կուրցիկիձէ ազգանունով, հրաժարվում է խմել և նոյնիսկ թափում է գինին բաժակից։ Այդ առիթով սկսվում է վիճաբանութիւն և հայհոյանք, որը վերջանում է նրանով, որ ամենքը ցրվում են տները։ Գնում է նաև Կուրցիկիձէն և հանելով Նիօրաձէի տակից մխում է հայրենական դաշոյնը նրա կողը։ Մինչև ընկերների հասնելը, վիրաւորը մեռնում է։ Սպանողը կալանաւորված է։

ՄԱՄՈՒԼ

Վրացի հասարակական գործիչ Անտոն Փուրցելաձէն «Тиф. Листокъ» լրագրի մի քանի համարներում, և ի միջի այլոց նոյն լրագրի 165-դ համարում, ի պաշտպանութիւն Խր. Խաչատուրովի և իբրև պատասխան «Закавказье» լրագրի յարձակումների, զետեղել է յօդուածներ վրացի շովէն ինտելիգենտների դէմ։

Այժմս վրաց «Զանգի» լրագիրը քաղուածօրէն առաջ բերելով Փուրցելաձէի նամակը, շատ իրաւացիօրէն գայրացած աւելացնում է իր կողմից.

«Երևում է, որ ցանկանների այգում ժամանակ կենսունակութիւն կը պարգևէ մեր շովինիստական ուղղութեան պատկանող լրագիրներին։ Մի գուցէ սա էլ ազգային շահերին ծառայել կը նշանակէ»։

Իրաւացի նկատողութիւն, որին ամբողջովին միացնում ենք մեր ձայնը։

Ցաւենայն դէպս մենք կարծում ենք, որ ժամանակ է փակել այդ հարցը։ Խր. Խաչատուրովի անձի դէմ գործած բռնութեան ակտը, իբրև անպայման դատապարտելի մի գործ, դատապարտվեց հանրութեան կողմից։ Ժամանակ է, որ կրքերը լռեն այլ ևս և մի մասնաւոր դէպքի չը տան ազգայնական միջադէպ դառնալու բնաւորութիւնը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 25 յուլիսի

Հակառակ մեր բուռն ցանկութեան և աշխատանքին, անցեալ կիրակի՝ ծխականների օրինական թիւը ներկայ չը լինելու պատճառով՝ ծխական ժողովը յետաձգվեց վաղը՝ կիրակի ամսիս 26-ին, որը և լինելու է երկրորդ և վերջին ժողովը։

Թէև հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ իրաւունք է տրված մասնակցել ժողովին միմիայն Վերայի ս. Խաչ եկեղեցու ծխականներին, բայց իմ կարծիքով արդեք չը պիտի դրվի և ոչ-ծխականներին, մանաւանդ նրանց, որոնք որևէ կերպով կապված են գերեզմանատան շահերի և բարեկարգութեան հետ, ներկայ գտնվել նոյն ժողովին, որովհետև այդտեղ պիտի քննվեն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են առանձնապէս գերեզմանատան եկ և մասի հաշուետուութեանը, առհասարակ ընդհանուր դրութեանը և բարեկարգութեանը։

Ուստի՝ սիրում եմ կարծել, որ իրաքանչիւր պարտաճանաչ ոչ-ծխականն էլ կաշխատէ տալ ժողովին լրացուցիչ տեղեկութիւններ վերոյիշեալ հարցերի վերաբերեալ։

Լևոն Ճգնաւորեանց

—

Ախալցխա, 22 յուլիսի

Ախալցխայի Հայ. Դր. Սիրողների Ընկ. Վարչութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը տ. Աղանի և Կար. Շիրինեաններին, որոնք բարեհաճեցին նուիրել յօգուտ ընկերութեանս 20 ր. իրանց պսակագրութեան առիթով։

Առիթից օգտվելով, վարչութիւնս կոչ է անում համակրողներին, որ իրանց օժանդակութեամբ նպաստեն ընկերութեանս բարգաւաճմանը։

Նախագահ վարչ.՝ Գ. Արաբեան
Քարտուղար՝ Լ. Հէպիպեան

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՄԱՐԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Տարօրինակ մարդիկ կան մեր մէջ, որոնք սիրում են ամեն ինչ չափազանցել և այսպիսով ծայրայեղութիւնների մէջ ընկնել։

Ես առաջարկել էի Վենետիկի Մխիթարեան միաբանութեանը՝ բաց անել Եւրօպայի հայ և նոյնիսկ օտար ուսանողութեան համար հայագիտութեան ամարային դասընթացքներ («Մշակ» № 151)։ Գ. Լեոնեան («Մշակ» № 155), սկզբունքով համակրելի գտնելով այդ առաջարկը, կասկածներ է յայտնում, որ Մխիթարեան հայրերը ձեռնհաս լինեն աւանդելու հայոց նոր պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն և միջին, նոր ու նորագոյն գրականութիւն, որովհետև Զամչեանի և միւսների գրած պատմութիւնը «դեռ ևս շարունակում է մնալ անհարազատ և միակողմանի կրօնական-դաւանաբանական շատ խնդիրներում իրանց միտումաւոր ծանօթութիւններով և լուսաբանութիւններով», որ նրանց հրատարակած քարտէզները և աշխարհագրական-տեղագրական հատուածալ գրքերը բազմաթիւ սխալներ են պարունակում իրանց մէջ, որ նրանք համեստ (?) ոտանաւոր գրողներին «Բազմավէպում» յայտարարեցին «հանճարներ», որ նրանք իրանց հայապիտութեան սահմաններն այնքան լայնացրին, որ նոյնիսկ օտար յատուկ անունները սկսեցին անպատճառ հայացնել և այլն։

Դատապարտել Մխիթարեան ուխտին, որ նրանց պատմական գրուածքներն այժմ էլ շարունակում են կրել դաւանաբանական-միտումաւոր լուսաբանութիւն՝ միանգամայն զրպարտութիւն է, որ նրանց հրատարակած քարտէզները և աշխարհագրական գրքերը բազմաթիւ սխալներ են պարունակում իրանց մէջ, որքան և ճիշդ, այնուամենայիւ գրանք մեռում են դեռ ևս միակ աղբիւր մեր բոլոր թեմական դպրոցների՝ Հայաստանի աշխարհագրութեան ուսուցիչների համար, ցաւալի է, այո, որ մինչև այժմ էլ նրանց կէս դար առաջ հրատարակած Հայաստանի քարտէզը դարձեալ գործ է ածվում մեր դպրոցներում, սակայն ինչ արած, երբ դրանից լաւը դեռ ևս չը կայ և հեշտ էլ չէ կազմելը։ Եթէ մի «համեստ» ոտանաւոր գրողի նրանք «Բազմավէպում» հանճար են համարել, այդ դեռ չէ նշանակում, որ նրանք հայոց նորագոյն գրականութեան մասին գաղափար չունեն. ցաւալին միայն այն է, որ հայոց նոր գրականութիւնը դեռ ևս ուսումնասիրված չէ, որ պակասում են մեր մէջ լաւ քննադատներ, որոնք նրանց՝ այդ առարկան չեն կարող աւանդել դարի մշակման համեմատ։ Ամարային դասընթացքներին յաճախելը գիտական նպատակով ուսումնասիրութիւն կատարել չէ, և հարկաւոր չէ, որ յաճախողները շրջերին այրվեն, խորովվեն, քանի որ յարմարութիւն կայ մի հովասուն գիւղում մնալու։

Բաւական ժամանակից ճանաչելով թէ Մխիթարեան հայրերին և թէ հայ ուսանողութիւնը՝ ես համարձակ կարող եմ ասել, որ վերջինս շատ ու շատ կարող է սովորել այդ հայրերից և այս գիտութիւնը չափազանց կը նպաստէ հայ ուսանողներին գիտակցօրէն վերաբերվելու դէպի այն շրջանը, ուր ազգային գործելու են իրրև հասարակութեան անդամներ և թէ այսպիսով նրանցից կարող են պիտանի լինել մայրենի գրականութեան։

Չեմ կասկածում, որ ողջամիտ հայ ուսանողութիւնը երախտագիտութեամբ պիտի վերաբերվի դէպի Մխիթարեան հայրերը, եթէ որ սրանք հաճեն բանալու նրանց առաջ իրանց հարուստ գրադարանը և հայագիտական ահագին շտեմարանը։

Եր. Լալայեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

Ախալցխա, Արսէն Քէշիշեանցին.— «Մշակի» համարները ուղարկվում են ձեզ կանոնաւոր։ Զը ստացված համարների վերաբերմամբ տեղեկացէք այդտեղի պօստային բաժանմունքից։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Թ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հիւանդների բաժանմունքով

Թիֆլիս, Ելիզավետինսկայա փ., 79, տել. 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդ (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Գ. ԿԻՄՕՆՑ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻՒՐԻ—առ. ժ. 11—12-ը քթի բգի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄԶԱՐԵՒԻԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և մանկաբարձ.։

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնոզով։ Միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Մազի պատուաստումներ։ Ծծմայրի՝ բ բնութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։ Օգնականները և համախոհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(Կ. Ա. Ս.) 236. 100—47

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հրատարակութեամբ շուտով լոյս կը տեսնի

ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

«ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ»

Գինն է { Ուսուցչական մասի . . . 75 կ.
Աշակերտական մասի. . . 15 կ.

Պատուէրները պէտք է ուղղել Կ. Հ. Բ. Ընկերութեան։

(Կ. Ա. Հ.) 704. 4—1

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Ն. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆԸ

որը աւարտել է Թիֆլիսի Պօվիվալնի ինստիտուտը և գինեկոլոգների հիւանդանոցում 3 տարի կատարելագործել է իր մասնագիտութիւնը,

Ժամանակաւորապէս տեղափոխվել է ԿԱՐՍ։

(Կ. Հ.) 670. 3—3

Օգոստոսի սկզբին լոյս կը տեսնի

Բոլորովին նոր ուղղութեամբ կազմած

ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ և Տ. ԴԱՇՄԱՆՅԱՆԻ

աշխատակցութեամբ Աւ. Իսահակեանի

Առաջին տարվայ

Այբբենարան-ընթերցարան

„ԴԱՍԸՆԿԵՐ“

Զարդարված բազմաթիւ գունաւոր պատկերներով

Գրքի երեսի, տարվայ չորս եղանակների առանձին առանձին, գրել կարդալն սկսելուն վերաբերող ու զրուցատրութեան նիւթ կազմող մեծադիր գունաւոր պատկերներ և այլն։

Պատկերազարդեց նկարիչ Գ. Երիցեան

Դասագրքին կից կայ՝

Համառօտ բացատրութիւն գործադրողներին։ Ծանօթանալ ցանկացող դպրատները կարող են գրիչ (Книжный магазинъ «Гуттенбергъ» Тифлисъ). Օտար տեղերից դիմողները պիտի ուղարկեն միմիայն ճանապարհածախքը 10 կ. պօստի մարկայով։

(23, 25, 26, 28, 31) 684. 5—3

ՀՕՏՕՐԴԻ (ՏՐԻՊՊԷՐԻ) ԴԷՄ

Նոր-միջոց—salo

«ՊԻՋԻԼԻՆ»

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իրրև հաստատական միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մեծադեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։ Միաժամանակ լաւ է ներգործում թէ տուր և թէ յարատև ընոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատամ ընթացքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է դեղատներում։ Մեծաքանակ վաճառքի համար—դեղավաճառանոցային պահեստներում։

(Հ.Կ.) (II. 88623) 540. 60—14

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ ՅՈՎՍԷՓ

Մելիք-Զհանեանցի

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ։ Պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ուսանվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։

(Օ. Մ.) 604. 20—10

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ և ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ խմբագրութեամբ

կազմվում է

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Դասագիրք հայոց դպրոցների III և IV տարիների

Հարկաւոր են, անպայման վարձատրութեամբ, ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ, բացի վարձատրութիւնից և մրցանակ։ Երգերը լինելու են՝ տեքստով—բովանդակալից, գեղարուեստական և մանկան հասկանալի. մելոդիայով—ֆորմի կազմութեամբ տեքստին նմանվող՝ գեղեցիկ, մելոդիական և րիտմով հակիրճ։

Դիմել՝ Յոհաննեան-Մարիամեան դպրոց (Бебутовская ул.) ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ։

(Կ.) 626. 4—4

Ներսիսեանաւարտ

4-րդ տարվայ ուսուցիչ

Գէորգ Մելիքեանը,

որ աւարտել է նաև ռուսաց քաղաքային դպրոցի վեցամեայ դասընթացքը, ցանկանում է պաշտօնավարել հայոց ծխական դպրոցներից մէկում։

Տիրապետում է ռուսաց և հայոց լեզուներին։

Պայմաններով դիմել՝ Петровскъ—Портъ, священнику Аршену Маркарьянъ.

(Կ.Ա.Հ.) 698. 3—1

Թիֆլիսի Կենտրոնական Գրաւաճառանոցում

Բիբլիան, Նորապատկեր, կատակ. 2 գործ., գ. 60 կ.։

Իւանով, Ըստ յայտարարութեան, վօդեվիլ 1 գ., գ. 40 կ.։

Պոչեան, Աբցիղէի, պատկեր, գ. 25 կ.։

» Միքէլ-Աղէնց Արգիւլը, զրոյց, գ. 20 կ.։

» Նա, պատկեր, գ. 20 կ.։

» Սօս և Վարդիթեր, գ. 1. ր 20 կ.։

Սունդուկեան, Բաղնքսի Բօխչա. կատակ 2 գ. գ. 40 կ.։

» Գիշերվան սարը խէր է, կատակ. 1 գ., գ. 30 կ.։

» Քանդած օջախ, կատ. 3 գործ., գ. 50 կ.։

» Օսկան Պետրովիչն էն կինքում, կատակ. 1 գ. գ. 30 կ.։

Փափազեան, Ժայռ, դրամա 4 գործ. գ. 1 ր.։

699. 1—1

Ախարադի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը սրբանով յայտնում է խնդրատու և ցանկացող ուսուցիչներին, իր խնամքին յանձնված դպրոցում ուսուցչութիւն վարել ցանկացողներին՝ դիմել «Մշակի» խմբագրատուն Լ. Դանիէլեանին։

(Կ. Հ.) 702. 2—1

Ցանձնված է տպագրութեան

և մինչև օգոստոսի 5—10-ը լոյս կը տեսնի

Դասագիրք

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Կազմեց հայոց տարրակ. դպրոցների համար

Ներսիսեան Դպրոցի ուսուցիչ՝

Տ. Գիւզալեան

Մասն առաջին

Անգործածանաւոր աշխարհ—օդ, ջուր և երկիր։

Հարիւր երեք նկարներով։

(Կ. Հ.) 701. 3—1

Հարկաւոր է

Զաքաթալայի հայոց եկ.-ծխ. դպրոցի համար գիմնազիաւարտ փորձառու

ԴԱՍԱՏԱՐԻՆ

Պայմանների մասին դիմել Թիֆլիս, «Հեռաներեկ նամակներ», № 30, կամ Լերմօնտովսկայա փ., № 4, պանսիոն Մելիք-Զհանեանցի, աւ.-ուսուցիչ Ն. Մանուչարեանցին։

(Չ. Կ.) 683. 3—2

Լոյս տեսաւ

Ռ. Խան-Ազատ եւ Գ. Վարդանեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

27 նկարներով և մի մեծ գունաւոր քարտէսով։

Դասընթացք ծխ. դպրոցների IV բաժանմունքի և ժողովրդական ընթերցանութեան համար։

Գինն է 75 կօպ.

Գլխաւոր պահեստը «Գուտենբերգ» գրավաճառանոցում. կարելի է դիմել և հեղինակներին՝ — Тифлисъ, Сурпъ-Нишанское училище.

(Օ. Մ.) 625. 10—9

Ախալքալաքի

Հայոց եկեղ.-ծխական երկսեռ երկդասեան դպրոցների համար

Հարկաւոր են

Մինչնակարգ կրթութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

շաբաթական 20—24 դասով, 20 ռուբլի դասագնով, և մի փորձված աւագ-ուսուցիչ, որ աւանդելու է շաբաթական 16 դաս և ստանալու է ընդամենը 800 ռ. տարեկան ռոճիկ։ Դիմել՝ гор. Ахалкалаки, Հոգաբարձութեան։

Նախագահ՝ Վ. Կարապետեան

Քարտուղար՝ Ղ. Տէր-Գրիգորեան

(Օ. Մ.) 678. 3—3

Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի

ԿԱԶՄԱԾ

ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ.

Ա. տարի . . . . . 30 կ.
Բ. տարի, երրորդ տիպ, բարեփոխ. . . . . 45 կ.

Երկուսն էլ ընդունված կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից իրրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրվում են.

Գ. տարի . . . . . 60 կ.
Դ. տարի . . . . . 75 կ.

Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները. Թիֆլիսում՝ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Բաքուում՝ Сотрудникъ, Երևանում՝ Յովհաննիսեանի և Շուշում՝ Բ. Տէր-Սահակեանի։

ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԻՆ ԶԵՂՉ 20%

(Կ. Հ.) 20—5

ՀԱՇԻՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ

Երկու սեռի անձերի համար

(Տասերորդ տարի)

Դասընթացքներում աւանդվում են. հաշուապահութիւն իտալական կրկնակի սիստեմով՝ արդիւնաբերութեան զանազան ճիւղերի համար, առևտրական թուաբանութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական իրաւունք, գեղագրութիւն և ցանկացողներին գրող մեքենայի վրա սովորեցնում։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։

Դասընթացքները շարունակվում են 6 ամսից ոչ պակաս։

Պարապմունքները երեկոները, շաբաթական 3 անգամ։

Ամբողջ դասընթացքի վճարն է 40 ռուբլի։

Խնդիրները՝ Թիֆլիսի Առևտրական Դպրոցի դիրեկտորի անունով՝ ընդունվում են դպրոցի գրասենեակում, ցերեկվայ ժամը 10—12-ը։

(Հ. Կ.) 682. 6—2

ՀԱԾԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՄԱՐԱՆՆԵՐ

Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ

Հիմնված 1890 թ. Թիֆլիսում

Նարէրեժնայա փող., Վերայի կամուրջի մօտ.

Ցատուկ առևտրական ուսումնարան երկու սեռի անձանց համար, 15 տարեկանից ոչ պակաս։ Դասընթացքը պարատևում է հաշուապահ, թղթակցի, գործակալի և այլն պաշտօններ վարելու կառավարչական, հասարակական և առևտրաարդիւնաբերական հիմնարկութիւններում։ ՕՐԻՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ։ ԴԱՍԱՒԱՆԴՈՂՆԵՐԻ ԼԱՒ ԿԱԶՄ։ 19 տարվայ ընթացքում աւարտել են հազարաւոր երիտասարդներ, որոնք այժմ վարում են պատասխանատու պաշտօններ։ Մասնաժամանութիւնները ձրիաբար տրվող ծրագիրներում։ Խնդիրների ընդունելութիւնը սկսված է։ Պարապմունքները սեպտեմբերի 15-ից։ Դրասենեակը բաց է ամեն օր։

(Օ. Մ.) 667. 13—4



1897 թ.

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՐԻԳԱՅՈՒՄ



1888

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4.

Առաջարկում է մեծաքանակ եւ հատով

Կառքերի համար ըէզինի շիներ.
Աւտոմօբիլների համար պնէվմատիկ շիներ «ԱԼՄԱԶ» (կարմիր).
Վելօսիպեդների համար պնէվմատիկ շիներ.
Աւտոմօբիլ-օմնիբուսների համար խիտ-ըէզինի շիներ.

«ՊՐՕՎՕԴՆԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած շիները երկար տարիների ընթացքում ճանաչված են իրրև առաջնակարգ և բարձր են կանգնած արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաների շիներից, որի համար վկայում է ոչ միայն նրանց վերաբերմամբ եղած խոշոր պահանջը Ռուսաստանի սահմաններում, այլ և գլխաւորաբար մեծ քանակութեամբ արտասահման արտահանելը։

Հատուկ ուշադրութիւն աշխարհի ամենալաւ

ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ“

(№ 3) 25—19